ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է Պարույր Նահապետը թագադրվել և ճանաչվել Հայաստանի թագավոր.

1) Ք. ա. 681 թ.
2) Ք. ա. 612 թ.
3) Ք. ա. 618 թ.
4) Ք. ա. 621 թ.

2 Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում հայկական հելլենիզմի երկրորդ փուլը.

1) Ք. ա. III–I դարերը
2) IV–VII դարերը
3) Ք. ա. VI–III դարերը
4) I–III դարերը

3 Ե՞րբ է Վ. Բեհբութովը նշանակվել Հայկական մարզի կառավարիչ.

1) 1830 թ.
2) 1838 թ.
3) 1846 թ.
4) 1849 թ.

4 Ե՞րբ է ցարական իշխանությունների կողմից հայտնաբերվել «Բարենպատակ ընկերություն» խմբակը.

1) 1868 թ.
2) 1872 թ.
3) 1875 թ.
4) 1869 թ.

5 Համազանգեզուրյան երկրորդ համագումարը հրավիրվել է՝

1) 1921 թ. փետրվարի 25–ին
2) 1920 թ. դեկտեմբերի 25–ին
3) 1921 թ. ապրիլի 27–ին
4) 1921 թ. հունիսի 1–ին

6 Ե՞րբ է Բաքվում տեղի ունեցել հայ բնակչության կոտորածը և տեղահանությունը.

1) 1990 թ. հունվարի 13–20–ը
2) 1991 թ. հունվարի 13–20–ը
3) 1990 թ. փետրվարի 27–29–ը
4) 1990 թ. ապրիլի 5–12–ը

7 Ե՞րբ է հաշտության պայմանագիր կնքվել Լևոն II–ի և Անտիոքի իշխան Բոհեմունդ III–ի միջև.

1) 1192 թ.
2) 1194 թ.
3) 1198 թ.
4) 1187 թ.

8 Ե՞րբ է Ստեփանոս Սալմաստեցին հրավիրել Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը.

1) 1549 թ.
2) 1551 թ.
3) 1562 թ.
4) 1547 թ.

9 Ո՞ր կազմակերպությունն է հրատարակել «Ազատության ավետաբեր» թերթը.

1) «Հայրենասերների միություն»
2) «Պաշտպան հայրենյաց»
3) «Զինակիր»
4) «Հայասեր–ազգասեր»

10 Ո՞վ է եղել Հայկական կորպուսի կոմիսար.

1) Ա. Մանուկյանը
2) Դրոն
3) Մ. Արեշյանը
4) Մ. Սիլիկյանը

11 Որքա՞ն հայ բնակչություն կար Կիլիկիայում 1920 թ. սկզբներին.

1) 100 հազար
2) 50 հազար
3) 150 հազար
4) 200 հազար

12 Որքա՞ն հայ է ներգաղթել Խորհրդային Հայաստան 1962–1982 թթ.

1) մոտ 25 հազար
2) մոտ 63 հազար
3) մոտ 32 հազար
4) մոտ 4 հազար

13 **Ի՞նչ էր անվանվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում.**

1) Արատտա
2) Ուրարտու
3) Հարմինույա
4) Արմինա

14 **Ո՞ր արքայից է Արշակունիների թագավորական իշխանությունը Մեծ Հայքում դարձել ժառանգական.**

1) Վաղարշ II
2) Խոսրով II
3) Վաղարշ I
4) Տրդատ II

15 **Ավատատիրական Հայաստանում յուրաքանչյուր նախարարի տեղը արքունիքում ո՞ր պետական կարևոր փաստաթղթով էր սահմանվում.**

1) զորանամակով
2) աշխարհագրով
3) դատաստանագրքով
4) գահնամակով

16 **Ո՞ւմ նախագծով է կառուցվել Անիի Մայր տաճարը.**

1) Պողոսի
2) Տրդատի
3) Մոմիկի
4) Մանվելի

17 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

1) Տակիտոսը
2) Փավստոս Բուզանդը
3) Արիանոսը
4) Մովսես Խորենացին

18 **Ո՞ւմ է հետևյալ կերպ գնահատել պատմիչը.**

« … եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:

1) Սահակ Պարթևին
2) Մեսրոպ Մաշտոցին
3) Վաչագան Բարեպաշտին
4) Վռամշապուհին

19 **Կ. Պոլսի հայ համայնքի գործերի կառավարման նպատակով 1844 թ. ստեղծված մարմինը կոչվում էր՝**

1) Սինոդ
2) Ազգային խորհուրդ
3) Ազգային ժողով
4) Պատրիարքարան

20 **Ի՞նչ էր կոչվում կիլիկյան բանակի սպարապետի անմիջական տեղակալը, որը գլխավորում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարման գործը.**

1) գունդստաբլ
2) մարաջախտ
3) երկրորդ սպարապետ
4) սպասալար

21 **Ինչո՞ւ Վիեննայի արքունիքում մերժեցին Օրուն և հրաժարվեցին Հայաստանի ազատագրության գործին մասնակցելուց.**

1) Թուրքիայի հետ կնքված հաշտության պայմանագրի պատճառով
2) չցանկացան վատթարացնել հարաբերությունները պարսկական տերության հետ
3) սկսված ավստրո–ֆրանսիական պատերազմի պատճառով
4) ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով

22 **Թվարկվածներից որո՞նք են 1950–1960–ական թթ. հայագիտության զարգացման արդյունքներ.**

ա. «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հրատարակման սկիզբը
բ. «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաների նախագծումը
գ. «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորների հրատարակումը
դ. ուրարտական և հելլենիստական շրջանի հուշարձանների պեղումները
ե. Բյուրականի աստղադիտարանի վերածվելը գիտահետազոտական խոշոր կենտրոնի
զ. «Երկունք» և «Նահապետ» պատմական կինոնկարների ստեղծումը

1) բ, գ, զ
2) ա, բ, դ
3) գ, դ, ե
4) ա, գ, դ

23 **Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արգիշտի II
բ. Ռուսա III
գ. Իշպուինի
դ. Էրիմենա
ե. Արգիշտի I
զ. Սարդուրի II

1) զ, գ, ե, ա, բ, դ
2) գ, ե, ա, զ, բ, դ
3) ե, զ, ա, գ, բ, դ
4) գ, ե, զ, ա, դ, բ

24 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շապուհ II–ի զորքերի ջախջախումը Գանձակի մոտ և Հայաստանում խաղաղության վերականգնումը
բ. Պապի վերադարձը Հայաստան Տերենտիոսի գլխավորած զորաջոկատով
գ. Պապ թագավորի խուսափելը ծուղակից և վերադառնալը Տարսոնից Հայաստան
դ. Ատրպատականում Շապուհ II–ի գանձարանին և կանանոցին տիրանալը հայերի կողմից
ե. Մերուժան Արծրունու ձերբակալությունը և մահապատիժը

1) բ, դ, ե, ա, գ
2) ե, բ, գ, դ, ա
3) բ, գ, ե, ա, դ
4) բ, ե, գ, ա, դ

25 **Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները.**

1) Հովհաննես Այվազովսկի	ա. «Զանգեզուր»
2) Եղիշե Թադևոսյան	բ. «Նոյը իջնում է Արարատից»
3) Գևորգ Բաշինջաղյան	գ. «Արևածաղիկը»
4) Վարդգես Սուրենյանց	դ. «Ս. Հռիփսիմե»
	ե. «Սալոմե»

1) 1–բ, 2–գ, 3–ա, 4–դ
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե
3) 1–ա, 2–դ, 3–բ, 4–գ
4) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ե

26 **Հայազգի զորահրամանատարների անունները համապատասխանեցնել իրենց կոչումներին.**

1) ԽՍՀՄ մարշալ, կրկնակի հերոս
2) ավիացիայի մարշալ
3) ինժեներական զորքերի մարշալ
4) զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ

ա. Իվան Իսակով
բ. Սերգեյ Ագանով (Ագանյան)
գ. Համազասպ Բաբաջանյան
դ. Արմենակ Խանփերյանց (Սերգեյ Խուդյակով)
ե. Հովհաննես Բաղրամյան

1) 1–ե, 2–դ, 3–բ, 4–ա
2) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
3) 1–ե, 2–դ, 3–բ, 4–գ
4) 1–գ, 2–ա, 3–ե, 4–բ

27 **Ո՞ր շարքի բոլոր մայրաքաղաքներն են գտնվել Այրարատ նահանգում.**

1) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Վան, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան
2) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Վան, Բագարան
3) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Երազգավորս, Անի, Դվին, Երևան
4) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Տիգրանակերտ, Անի, Դվին, Երևան

28 **Ե՞րբ է կազմվել Գոշի «Դատաստանագիրքը».**

1) մոտ 1150 թ.
2) մոտ 1180 թ.
3) 1198 թ.
4) 1184 թ.

29 **Ե՞րբ է կայացել Հայկական համաշխարհային կոնգրեսը.**

1) 1946 թ. փետրվարի 21 – մարտի 14
2) 1947 թ. ապրիլի 30 – մայիսի 4
3) 1947 թ. նոյեմբերի 20 – նոյեմբերի 24
4) 1945 թ. մարտի 19 – հուլիսի 19

30 **Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը.**

1) 411 հազ. քառ. կմ
2) 80 հազ. քառ. կմ
3) 250 հազ. քառ. կմ
4) 311 հազ. քառ. կմ

31 **Որտե՞ղ է մարտնչել Փարամազի խումբը հայ–թաթարական ընդհարումների ժամանակ.**

1) Զանգեզուրում
2) Բաքվում
3) Թիֆլիսում
4) Երևանում

32 **Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հրապարակվել հետևյալ կոչը.**

«Յո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

1) Սասունի 1904 թ. իրադարձությունների
2) Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման
3) արևմտահայության կոտորածների
4) հայ–թաթարական ընդհարումների

33 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

1) Հենրիխ Պողոսյան
2) Զորի Բալայան
3) Յակով Զարոբյան
4) Վաչե Սարուխանյան

34 **Ուրարտուում թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին՝**

1) արքայի «խորհրդականներ»
2) արքայի «գործակալներ»
3) արքայի «փոխանորդներ»
4) արքայի «կառավարիչներ»

35 **Ինչո՞ւ է Արշակ արքան Գնելին մահապատժի ենթարկել.**

1) քանի որ Գնելը հանցավոր համաձայնության էր եկել կենտրոնախույս նախարարների հետ
2) քանի որ Գնելն աչք էր դրել թագուհի Փառանձեմի վրա
3) քանի որ Տիրիթը հավաստիացրել էր նրան, թե Գնելը ցանկանում է դավադրորեն հայոց արքա դառնալ
4) քանի որ Գնելը գաղտնի կապեր էր հաստատել Շապուհ III–ի հետ

36 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շահամիր Շահամիրյանի կողմից Մադրաս քաղաքում հայկական տպարանի հիմնումը
բ. անգլիական «Արևելահնդկական ընկերության» և հայ վաճառականության միջև պայմանագրի կնքումը
գ. «Որոգայթ փառաց» գրքի հրատարակումը
դ. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի հրատարակումը
ե. Արևելյան Վրաստանի բռնակցումը Ռուսաստանին
զ. Հովսեփ Էմինի վերջնական վերադարձը Հնդկաստան

1) զ, բ, ա, դ, գ, ե
2) բ, զ, ա, գ, դ, ե
3) ե, ա, գ, դ, զ, բ
4) բ, զ, ա, դ, գ, ե

37 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա) Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանի ընտրվելը կաթողիկոս
բ) Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածի հրապարակումը
գ) Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնության անդամագրվելը կոլտնտեսություններին
դ) «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից
ե) Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
զ) ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը Ս. Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին

1) բ
2) գ
3) ա
4) զ

38 **Անվանումները համապատասխանեցնել նահապետների անուններին.**

ա. Արամ	1. Արմավիր
բ. Արամանյակ	2. Արմենիա, արմեն
գ. Արամայիս	3. Երասխ (Արաքս)
դ. Երաստ	4. Արարատ
	5. Արագած, Արագածոտն

1) ա–4, բ–5, գ–2, դ–3
2) ա–4, բ–1, գ–5, դ–3
3) ա–5, բ–2, գ–1, դ–4
4) ա–2, բ–5, գ–1, դ–3

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) 1920–ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:
2) Սոցիալ–դեմոկրատներին անվանում էին նաև էսէռներ:
3) Գյուղացիության մեծամասնությունը կազմող միջակ գյուղացուն ունեզրկման, ընտանիքով գյուղից վտարման քաղաքականությունը կոչվեց կուլակաթափություն:
4) 1919 թ. սեպտեմբերին ստեղծված Հայաստանի միավորված բոլշևիկյան կազմակերպությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի էր «Հայաստանի կոմիտե» անունով:
5) ԽՍՀՄ–ում առաջնահերթ կարգով թեթև արդյունաբերական և սննդի ձեռնարկությունների ստեղծման քաղաքականությունը կոչվեց արդյունաբերացում:

40 **Ի՞նչ հետևանքներ ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.**

1) Առաջին անգամ պատմության մեջ՝ Հայաստանի սահմաններում ընդգրկվեց ամբողջ Փոքր Ասիան:
2) Փոխվեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը:
3) Ստեղծվեց Հայկական տերությունը, որը հիմնավորապես տարբերվում էր Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տերություններից:
4) Սելևկյան պետությունն ու Պարթևստանը իրենց դիրքերը զիջեցին Հայկական տերությանը:
5) Հռոմը պարտություն կրեց Միջերկրածովյան ավազանում գերիշխանության հասնելու համար ծավալված պայքարում:

41 **Ընտրել սխալ պնդումները.**

1) Ըստ Կորյունի՝ IV դ. սկզբին Սահակ Պարթևի նախաձեռնությամբ Արտաշատում եկեղեցական ժողով է գումարվել, որտեղ որոշվել է «հայ ազգի համար նշանագրեր գտնել»:
2) IV դ. վերջին մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպանության խնդիր էր դարձել, քանի որ հայոց գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու համար:
3) Հայ պատմիչները վկայում են հայկական նախամաշտոցյան այբուբենի մասին, որը V դարի սկզբին պահվում էր Ասորիքում՝ ասորի մատենագիր Բարդածանի մոտ:
4) Հայաստանում լուսավորչական գործունեությունն ընդարձակելով՝ Մաշտոցը հետագայում տառեր է ստեղծել նաև վրացիների և Աղվանքի ցեղերից մեկի՝ գարգարացիների համար:
5) Հայոց գրերը դարձան հայ ժողովրդի համար գոյատևման, ազգային ինքնության և արժեհամակարգի պահպանման հզոր միջոց բոլոր ժամանակներում:

42 **1890–ական թթ. հայ ազատագրական պայքարի իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Գում Գափուի ցույցը
2) Կուկունյանի արշավանքը
3) Բաբշենի հաղթական կռիվը
4) Սասունի հերոսամարտը
5) Վանի ինքնապաշտպանությունը
6) Խանասորի արշավանքը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) արևմտահայերի երկրորդ համագումարը Երևանում
2) Շարուր–Նախիջևանը ՀՀ–ին հանձնելու մասին անգլիացի գեներալ Դևիի և Դրոյի հրամանի ստորագրումը
3) արցախահայության առաջին համագումարը Շուշիում
4) Գարեգին Նժդեհի ուժերի հաղթանակը Նուրի փաշայի զորքերի նկատմամբ Որոտանի կիրճում
5) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» հռչակումը

44 **V դարի իրադարձությունները համապատասխանեցնել ճակատամարտերին.**

ա. Խաղխաղի ճակատամարտ
բ. Ավարայրի ճակատամարտ
գ. Ներսեհապատի ճակատամարտ
դ. Ակոռիի ճակատամարտ
ե. Ճարմանայի ճակատամարտ

1) Հովհաննես Ա Մանդակունու ոգևորիչ ճառը
2) հայկական զորքերի անցումը Կուրի ձախ ափը և բուն Աղվանքի բերդերի և քաղաքների ազատագրումը
3) Հայոց տանուտեր Սահակ Բագրատունու, Վահանի եղբոր՝ Վասակ Մամիկոնյանի զոհվելը
4) արաբների ջախջախումը, փախուստը և Երասխի ջրերում նրանցից շատերի խեղդամահ լինելը
5) պարսկական ուժերի ջախջախումը և Ատրվշնասպի սպանությունը
6) Սուրբ պատարագի սեղանի կանգնեցումը և չմկրտված զինվորների մկրտությունը

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, ավարտվել է Ռուսա II–ի օրոք:
2) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Հայկն էր՝ Արամազդ աստծո որդին:
3) Հայոց իշխանական համակարգում գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ» ենթակայության ավատատիրական սկզբունքը:
4) Կիլիկյան Հայաստանում արքունիքի մեջ մտնում էին արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:
5) Հայկական հարցը միջազգային դիվանագիտության առարկա է դարձել Փարիզի հաշտության պայմանագրով:
6) ՀԽՍՀ–ն վերանվանվել է Հայաստանի Հանրապետություն՝ անկախության հանրաքվեով:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Թվարկված գործառույթներից առանձնացնել երկուսը, որոնք Կիլիկյան Հայաստանում չէր տնօրինում թագադիրը.**

ա. Հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:
բ. Ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ:
գ. Հանդիսությունների ժամանակ կապում էր արքայի թագավորական նշանները:
դ. Հանդիսությունների ժամանակ թագ էր դնում արքայի գլխին:
ե. Թագավորի առաջին խորհրդականն էր և արքունի պալատի կառավարիչը:

1) բ, ե
2) ա, բ
3) դ, ե
4) բ, գ

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Պանթյուրքիզմը (հակաթյուրքականություն) ենթադրում էր իսլամադավան բոլոր ազգերի միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ (ջիհադ) բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ:
բ. Հայդուկ բուլղարերեն նշանակում է «հետևակ»:
գ. Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
դ. Ռուսաստանում 1844 թ. ստեղծված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
ե. Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
զ. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվել է Հայոց ազգային խորհուրդ:
է. 1917 թ. մարտի 9–ին Ժամանակավոր կառավարության կողմից Անդրկովկասում ստեղծած գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան սեյմ:

1) ա, գ, ե
2) ա, զ, է
3) գ, դ, ե
4) բ, դ, է

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Սարդուրի II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:

բ. Վանի թագավորության և սկյութների միջև հաստատված դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:

գ. Վանի արքայատոհմից իշխանության փոխանցումը Հայկազուններին տեղի ունեցավ Ասորեստանի ռազմական միջամտության և երկրի ներսում ծագած խռովությունների ու պալատական հեղաշրջման հետևանքով:

դ. Արտաշես I–ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական բոլոր տարածքները, բացառությամբ Փոքր Հայքի, միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:

ե. Տիգրանակերտի անկման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Լուկուլլոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:

զ. Ակցիումի ճակատամարտից հետո հայ–պարթևական միացյալ ուժերի հաղթության շնորհիվ Հայաստանում գտնվող հռոմեական լեգեոնները դուրս շպրտվեցին երկրից:

է. Արտաշես II–ին ասպարեզից հեռացնելու պատճառը նրա շեշտված հակապարթևական կեցվածքն էր և դաշինքը հռոմեացիների հետ:

ը. Տիգրան III–ից հետո առանց Հռոմի համաձայնության գահ բարձրացավ Տիգրան IV–ը և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:

1) ա, դ, զ, է
2) բ, գ, ե, ը
3) բ, դ, ե, է
4) ա, ե, զ, ը

49 **Թվարկվածներից որո՞նք են Փետրվարյան ապստամբության հետևանքներ.**

ա. Այն սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն գործել:

բ. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

գ. Խորհրդային իշխանությունները ժամանակավոր իշխանության անունից հրապարակեցին որոշում Արևելյան Հայաստանում կառավարման նոր ձևի հաստատման մասին:

դ. Վանի, Խնուսի և Էրզրումի մարզերում կարճ ժամանակ անց ձևավորվեցին և սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպություններ:

ե. Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ ու մասնակիցներ, այդ թվում՝ Ստեփան Ալավերդյանը, Սարգիս Մուսայելյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Եգոր Սևյանը:

զ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:

է. Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան նաև հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործին:

ը. Ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե՝ Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ:

թ. Երկրում վերականգնվեց ՀՀ օրինական իշխանությունը՝ ՀՅԴ ղեկավարությամբ:

1) բ, գ, ը, թ
2) ա, զ, է, թ
3) ա, բ, զ, է
4) գ, դ, ե, թ

50 **1918 թ. տեղի ունեցած իրադարձությունների տրված շարքում ո՞րն է վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Կարսի հանձնումը թուրքերին
բ. Ղարաքիլիսայի գրավումը թուրքերի կողմից
գ. Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից
դ. Սարդարապատի կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից
ե. Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը
զ. Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
է. Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
ը. Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից
թ. Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը

1) դ
2) գ
3) ե
4) թ

51 **Իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ
բ. Սպիտակի աղետալի երկրաշարժը
գ. Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ–ում
դ. հայ բնակչության կոտորածը Սումգայիթում
ե. «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
զ. Կ. Դեմիրճյանի ազատվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից
է. «Ղարաբաղ» կոմիտեի վերանվանվելը «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»–ի
ը. Մ. Գորբաչովի դիմումը «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին»
թ. պարետային ժամի հայտարարումը Երևանում

1) բ
2) է
3) թ
4) զ

52 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ
բ. մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
գ. Երվանդ III–ի դառնալը Հայաստանի սատրապ
դ. զորավար Վահումիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
ե. Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը
զ. Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը
է. Երվանդ II–ի գլխավորած ապստամբությունն Աքեմենյան տերության դեմ
ը. հունական 10–հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
թ. Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
ժ. Գավգամելայի ճակատամարտը

1) դ, զ, թ, է, գ, ը, ժ, ա, բ, ե
2) զ, թ, դ, է, ը, ժ, գ, ա, ե, բ
3) զ, դ, թ, է, բ, գ, ա, ժ, ե, ը
4) զ, թ, դ, ը, է, գ, ժ, ա, ե, բ

53 **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

1) Դավիթ բեկ
2) Նադիր շահ
3) Մխիթար սպարապետ
4) Հովհաննես Հունդիբեկյան
5) Վալերիան Մադաթով
6) Իվան Պասկևիչ

ա. Շամքորի ճակատամարտը
բ. Գանձակի ճակատամարտը
գ. Մեղրիի ճակատամարտը
դ. հաղթանակը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ
ե. Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը
զ. Երևանի 1724 թ. պաշտպանությունը
է. Եղվարդի ճակատամարտը

1) 1–դ, 2–է, 3–գ, 4–ե, 5–ա, 6–բ
2) 1–դ, 2–է, 3–գ, 4–զ, 5–ա, 6–բ
3) 1–գ, 2–է, 3–դ, 4–զ, 5–բ, 6–ա
4) 1–դ, 2–զ, 3–ե, 4–է, 5–բ, 6–ա

54 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հայ մշակույթը մշտապես ազդվել է տարաշխարհիկ մշակույթներից և կորցրել է իր յուրօրինակությունն ու եզակիությունը, ազգային մշակույթին բնորոշ գծերը:

բ. Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի հյուսիսային, Փոքր Ասիայի արևելյան և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:

գ. Հելլենիստական դարաշրջանում հայ մշակույթի երկրորդ՝ հելլենիստական շերտի կրողները գլխավորապես վերին խավերի և քաղաքային ազատ բնակչության ներկայացուցիչներն էին:

դ. Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Նեմրութ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:

ե. Հելլենիստական դարաշրջանի առաջին փուլում Հայաստանում մեծ տարածում է գտնում նաև զրադաշտականությունը, որը դուալիստական կրոն էր և ընդունում էր երկու գերագույն՝ բարի և չար աստվածների նախասկիզբ և համազոր գոյությունը:

զ. Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հասարակ ժողովրդի մեջ, հայոց արքունիքում և ավագանու շրջանում և ամբողջությամբ վերափոխեցին մեր ազգային մշակույթը:

է. Քրիստոնեության պետականացումից հետո Հայաստանում արգելվել է հայկական մեհենագրության գործածությունը:

1) բ, գ, է
2) ա, գ, ե
3) բ, զ, ե
4) դ, զ, է

55 **Թվարկված որոշումներից առանձնացնել երեքը, որոնք ընդունվել են Աշտիշատի ժողովում.**

ա. Թագավորն ու մեծամեծները թող գթասիրտ լինեն իրենց ծառաների և ստորադրյալների նկատմամբ, սիրեն նրանց՝ որպես իրենց ընտանիքի անդամների:

բ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի միայն աշխարհատեր և աշխարհական նախարարների առաջարկները:

գ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի ոչ միայն աշխարհատեր և աշխարհական, այլև գավառատեր և գավառական նախարարների առաջարկները:

դ. Թագավորն ու մեծամեծները անօրեն կերպով և չափազանց մեծ հարկերով չնեղեն հասարակ ժողովրդին:

ե. Թագավորն ու մեծամեծները թող գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ազարակ տեղերում տան երկուական, իսկ ավաններում՝ չորսական ծխի հողաբաժին:

զ. Թագավորն ու մեծամեծները թող զանազան գավառներից հավաքված մանուկներ ուղարկեն կաթողիկոսարան՝ Ավետարանի խոսքը ժողովրդին մատչելի դարձնելու համար հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու նպատակով:

է. Ծառաները թող հնազանդ և հավատարիմ մնան իրենց տերերին:

1) ա, ե, է
2) ա, գ, ե
3) բ, զ, է
4) ա, դ, է

56 **Ընտրել այն արտաքին նախադրյալները, որոնք հիմք դարձան Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու համար.**

ա. Հայաստանի համար բարենպաստ էր Մերձավոր Արևելքում սկսված տնտեսական վերելքը:

բ. Արաբական խալիֆայությունում լայն ծավալ էին ձեռք բերել ժողովրդական ընդվզումները, որոնք գահակալական կռիվների հետ միասին խարխլում էին կենտրոնական իշխանության դիրքերը:

գ. Արաբական խալիֆայության վարձկաններից բաղկացած բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին:

դ. Բյուզանդիայի հետ դավանաբանական միությունը թույլ էր տալիս ռազմական օգնություն ստանալ կայսրությունից:

ե. Առանձին երկրների ամիրաները ձգտում էին անջատվելու խալիֆայությունից, ուստի Հայաստանում ևս ուժեղանում էր արաբական լուծը թոթափելու համար պայքարը:

զ. Հայաստանում ավելի էր ուժեղացել անկախության հասնելու ձգտումը:

է. Վճռական դեր կատարեց արևմտաեվրոպական քրիստոնեական երկրների օգնությունը:

1) ա, դ, է
2) դ, ե, զ
3) բ, գ, ե
4) բ, գ, զ

57 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն

ա. Լևոն Ռոտինյան
բ. Հովսեփ Տեր–Աստվածատրյան
գ. Տիգրան Ջրբաշյան
դ. Հովսեփ Օրբելի
ե. Վարդան Աճեմյան
զ. Սերգեյ Մերկուրով
է. Նիկողայոս Բունիաթյան
ը. Շարա Տալյան
թ. Սուրեն Երեմյան

Մասնագիտություն

1) լեզվաբան
2) պատմաբան
3) ճարտարապետ
4) արևելագետ
5) ռեժիսոր
6) երգիչ
7) քանդակագործ
8) քիմիկոս
9) ճարտարագետ–էներգետիկ
10) երկրաբան

1) ա–9, բ–10, գ–8, դ–4, ե–1, զ–3, է–7, ը–5, թ–2
2) ա–8, բ–9, գ–10, դ–4, ե–5, զ–7, է–3, ը–6, թ–2
3) ա–8, բ–9, գ–10, դ–2, ե–1, զ–7, է–3, ը–6, թ–4
4) ա–9, բ–8, գ–10, դ–7, ե–5, զ–2, է–6, ը–3, թ–4

58 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Արմենականները Հայկական հարցի լուծումը կապել են Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:

բ. Արմենականները կրել են «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գաղափարական ազդեցությունը:

գ. Վան քաղաքի մտավորականների գաղափարական ոգեշնչողներն են եղել Խրիմյան Հայրիկը, Մկրտիչ Փորթուգալյանը և Մկրտիչ Ավետիսյանը:

դ. Որպես հեռավոր նպատակ՝ հնչակյանները սահմանել են մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը, իսկ մոտակա խնդիր՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից:

ե. Հայ ազգային–քաղաքական կուսակցություններից դաշնակցականներն առաջինն են եղել, որ Հայկական հարցի լուծումը համարել են ամբողջական հայրենիքում պետության վերստեղծումը:

զ. Արմենականների սոցիալիստական թևը, որը կարևոր խնդիր է համարել սոցիալական ազատագրությունը, կազմել է մեծամասնություն, իսկ ազգայինը՝ փոքրամասնություն:

է. Արմենականները եղել են հայրենի հողի վրա ստեղծված առաջին ազգային կուսակցությունը:

ը. ՀՅԴ ծրագրի «Միջոցներ» բաժնում նախատեսվել է ժողովրդի զինում, մարտական խմբերի ձևավորում, ապստամբական և ահաբեկչական գործողությունների իրականացում:

թ. Հնչակյանների ազգային թևը Ա. Արփիարյանի գլխավորությամբ հեռացել է կուսակցությունից և հանդես է եկել «Վերակազմյալ հնչակյաններ» անունով:

1) բ, գ, զ
2) բ, ե, զ
3) ա, է, ը
4) դ, ե, թ

59 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:

բ. Բաթումի պայմանագրով Թուրքիային անցան Սուրմալուն, Կարսը, Ախալցխան, Նախիջևանը, Զանգեզուրը:

գ. 1920 թ. կեսերին ՀՀ տարածքը կազմում էր շուրջ 70 հազար քառ. կմ:

դ. Հայաստանի առաջին հանրապետության ընտրովի խորհրդարանն ուներ 80 անդամ:

ե. Խորհրդային իշխանությունը Հայաստանում քաղաքական բնույթի հետապնդումներ և բռնություններ չգործադրեց միայն հայկական բանակի սպայակազմի նկատմամբ:

զ. Թիֆլիսում համապատասխան հանձնաժողովում Ա. Բեկզադյանն առաջարկում էր Խորհրդային Հայաստանին միացնել Լոռին, Լեռնային Ղարաբաղը և Ախալքալաքի գավառը:

է. Կարսի կոնֆերանսում թույլատրվում էին Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները:

1) գ, դ, զ
2) ա, դ, է
3) բ, գ, ե
4) գ, ե, զ

60 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
2) Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
3) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր մարզպանություն:
4) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
5) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ:
6) Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր:
7) Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:
8) Բուզանդը Արտաշես I–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:

61 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Պետրոս I–ի՝ Անդրկովկաս արշավելու հետևանքով ռուսական զորքերը հաստատվեցին Սև ծովի արևմտյան և հարավային ափերին:
2) Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանքով արևելահայերը ազատվեցին գաղութային ճնշումներից:
3) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան:
4) Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրությունը հետ ստացավ Բայազետը:
5) 1862 թ. Զեյթունի ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
6) Համիդյան ցեղասպանական քաղաքականության արդյունքում 1890–ական թթ. 300 հազար հայ ոչնչացվեց և նույնքան էլ արտագաղթեց տարբեր երկրներ:
7) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանելի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:
8) Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:

62 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ չեն.**

1) Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությունն ու կրոնական հալածանքները 748–750 թթ. ապստամբության պատճառ հանդիսացան:
2) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը զարգացած ավատատիրության շրջանում գոյություն ունեցող ավատատիրական մասնատվածությունն ու իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:
3) Հայ–վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
4) Մլեհի դեմ կազմակերպված դավադրության պատճառը իսլամական երկրների հետ նրա գործակցելն էր:
5) Զաբելի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց Կիլիկյան Հայաստանի գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:
6) Սիսի 1243 թ. եկեղեցական ժողովի հետևանքը Քաղկեդոնի երկաբնակության դավանանքի ընդունումն էր:
7) Ունիթորների և հակաունիթորների պայքարի արդյունքում խախտվեց Կիլիկյան Հայաստանի հասարակության միասնությունը, թուլացավ երկիրը:
8) Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Զաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:

63 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Մադրասում Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում 1794–1796 թթ. լույս ընծայվեց հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:
2) XVIII դարում ստեղծված կարևոր պատմագիտական երկերից են Եսայի Հասան–Ջալալյանի «Համառօտ պատմութիւն Աղուանից», Աբրահամ Երևանցու «Հայոց պատմություն», Ստեփանոս Շահումյանի «Պատմութիւն Դավիթ բեկին» և այլ աշխատություններ:
3) Ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան գրել է «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը:
4) Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում է ունեցել Նիկողայոս Ադոնցը:
5) Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Օսմանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը:
6) Ճանաչված քիմիկոս Ջակոմո (Հակոբ) Չամչյանը իր գիտամանկավարժական գործունեությունը սկսել է Հռոմի համալսարանում, ընտրվել Պադուայի և Բոլոնիայի համալսարանների պրոֆեսոր:
7) Ֆիզիոլոգիայի բնագավառում մեծ գործ է կատարել ռուս մեծ գիտնական Ի. Պավլովի սան և հետևորդ Լևոն Օրբելին:
8) XX դարասկզբի հայ բեմի առաջատարը Մակար Եկմալյանն էր:

64 **Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը 3,5 տասնյակ է:
2) Թուրքիան մինչ օրս չի բացել ՀՀ–ի հետ պետական սահմանը, որը փակել է 1993 թ. ապրիլին:
3) 1991 թ. հունվարի 19–20–ը հայ ազատամարտիկները ազատագրեցին ռազմական հենակետերից մեկը՝ Կրկժանը:
4) 1992 թ. մայիսի 4–ին որոշվեց իրագործել «Հարսանիք լեռներում» գործողությունը:
5) 1992 թ. օգոստոսի 15–ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:
6) Մոնթե Մելքոնյանը զոհվել է 1993 թ. հունիսի 12–ին Աղդամի մոտ՝ Մարզիլու գյուղում:
7) 2008 թ. հունվարի 19–ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ Հրանտ Դինքը:

65 **Իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Վարդանակերտի ճակատամարտը
2) Արձնիի ճակատամարտը
3) խալիֆի կողմից Աշոտ Մսակերի ճանաչվելը հայոց իշխան
4) Մուշեղ Մամիկոնյանի ամրանալը Արտագերս ամրոցում
5) Աշոտ Մսակերի նստավայրի տեղափոխումը Դարույնքից Բագարան
6) «Արյան լճի» ճակատամարտը
7) հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու գահակալության սկիզբը
8) Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունիների գլխավորությամբ արաբների ոչնչացումը Տարոնում

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ի նշանավորումն հայ–հռոմեական դաշինքի վերականգնման՝ Հռոմի կայսեր կողմից Կապադովկիայի կալվածքները Հայաստանին վերադարձնելը
2) պարսից Ներսեհ արքայի բանակի ճամբար դնելը Ոսխա գյուղում
3) Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի (միջին պարսկերեն) գործածման սկիզբը
4) Կարակալլա կայսեր զորքի վտարումը Հայաստանից
5) Տրդատի հաղթական մենամարտը գոթերի իշխանի նկատմամբ
6) Խոսրով I–ի զորքերի արշավանքը Կովկասի լեռնական ցեղերի դեմ

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
2) ՀՀ–ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը
3) Սփյուռքում հայ ազգային երեք կուսակցությունների կողմից համազգային կենտրոնական մարմնի կազմումը՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար
4) «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը
5) Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը
6) «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը

68 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

ա. 1555 թ.
բ. 1299 թ.
գ. 1453 թ.
դ. 1639 թ.
ե. 1604 թ.
զ. 1638 թ.

1) Թավրիզի գրավումը շահ Աբասի կողմից
2) Բաղդադի գրավումը օսմանյան բանակի կողմից
3) Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը
4) հայ բնակչության բռնագաղթեցումը շահ Աբասի կողմից
5) Կասրե–Շիրինի պայմանագրի կնքումը
6) Օսմանյան պետության հիմնադրումը
7) Կոստանդնուպոլսի գրավումը օսմանյան բանակի կողմից

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 **Կատարել համապատասխանեցում.**

Իրադարձություն

ա. Ստանձնել է Սասունի 1894 թ. պաշտպանության ընդհանուր ղեկավարությունը:
բ. Հայ–թաթարական ընդհարումների ժամանակ ղեկավարել է Թիֆլիսի հայության ինքնապաշտպանությունը:
գ. Նշանակվել է հայ կամավորական VIII ջոկատի հրամանատար:
դ. Ընտրվել է 1915 թ. Շատախի կենտրոն Թաղում ստեղծված զինվորական մարմնի ղեկավար:
ե. Ղեկավարել է Շապին Կարահիսարի ինքնապաշտպանության զինվորական խորհուրդը:
զ. Ղեկավարել է 1915 թ. Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանության զինվորական մարմինը:

Գործիչ

1) Հայկակ Կոսոյան
2) Ղուկաս Տեռվլեթյան
3) Նիկոլ Աղբալյան
4) Մեծն Մուրադ
5) Վարդան
6) Արմեն Գարո
7) Բաղդիկ Սիմոնյան

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1) Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
2) Բագրատունիների հայոց թագավորության անկումից հետո պահպանված հայ նախարարական համակարգը ուշ միջնադարում դարձավ հայոց անկախ պետականության կրողն ու պահապանը:
3) Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքական ուժերը ողջունեցին բոլշևիկյան հեղաշրջումը և պատրաստակամություն հայտնեցին՝ համագործակցելու խորհրդային իշխանության հետ:
4) Հայ ժողովրդի մայիսյան հաղթանակները վիժեցրին հայերին իսպառ ոչնչացնելու՝ քեմալականների կառավարության քաղաքականությունը:
5) Հայկական ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի նպատակն է միասնական հայկական պետության կազմումը ոչ միայն Վիլսոնի նախանշած սահմաններում, այլև ժամանակին Խորհրդային Հայաստանից անջատված բոլոր տարածքներով հանդերձ:
6) «Իրավապաշտպան» հասկացությունը ի հայտ է եկել գորբաչովյան վերակառուցման շրջանում. դա բնութագրում էր այն մարդկանց, ովքեր պայքարում էին խորհրդային իրականությունը փոփոխելու համար: